ՕՐԱԿԱՐԳ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի մարտի 23-ի, ժամը 14:00-ի նիստի

1. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու մասին** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 25.01.2022):

   Զեկուցողներ՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ **Ա.Հ.Սարգսյան**:

   1) **Գագիկ Սերգեյի Ասլանյան՝** կառավարման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

   Հավակնորդի գործը քննարկվել և երաշխավորվել է գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի՝ 2022 թվականի մարտի 11-ի, ժամը 15:30-ի նիստում (արձանագրություն N 7):

2. **Դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:**

   Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ **Ա.Հ.Սարգսյան**:

   1) **Արգամ Համլետի Արտաշյան՝** տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու:

   Հայցորդի գործը քննարկվել և երաշխավորվել է գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի՝ 2022 թվականի մարտի 18-ի, ժամը 15:30-ի նիստում (արձանագրություն N 8):

3. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պատվավոր կոչումների շնորհման կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին:**

   Զեկուցող՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան**:

4. **Դասընթացի իրականացման գնահատման նպատակով ուսանողական հարցման անցկացման ընթացակարգում փոփոխություններ կատարելու մասին:**

   Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

5. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսանողների վերականգնման, ներքին տեղափոխության, առարկայական (ծրագրային) տարբերությունների հանձնման և ուսման վճարի հաշվարկման ընթացակարգում փոփոխություններ կատարելու մասին:**

   Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

6. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի աշխատակիցներին Scopus / Web of Science գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հրապարակումների համար հոնորարների տրամադրման կարգը հաստատելու մասին:**

   Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

7. **Ակադեմիական հարթակներում համալսարանի դասախոսների գրանցման վերաբերյալ ռեկտորի 2022 թվականի հունվարի 26-ի հանձնարարականի հաշվետվության մասին:**

   Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

8. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներքին և արտաքին շահառուներին 2022 թ. առաջարկված հետազոտական ուղղությունների և նրանց կողմից ամրագրված հետազոտական թեմաների ցանկը հաստատելու մասին:**

   Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան:**

   Հետազոտական թեմաները քննարկվել և հաստատվել են գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի՝ 2022 թվականի մարտի 16-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 8):

9. **Ընթացիկ հարցեր:**

   1) **Ատենախոսությունների թեմաներ և գիտական ղեկավարներ հաստատելու մասին:**

      Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

   Ատենախոսությունների թեմաները քննարկվել և հաստատվել են գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի՝ 2022 թվականի մարտի 16-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 8):

2) Կառավարման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու. **Աննա Աշոտի Մինասյանի «Գործարար հաղորդակցում և բիզնես բանակցությունների կառավարում»** ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Ուսումնական ձեռնարկը, 100 օրինակ տպաքանակով, հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի՝ 2022 թվականի մարտի 17-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 9): Այն նախատեսվում է հրատարակել հրատարակչական պլանով՝ «Տնտեսագետ» հրատարակչությունում:

3) Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Դիանա Սիմոնի Մինասյանի «Հարկային վերահսկողություն»** ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Ուսումնական ձեռնարկը, 100 օրինակ տպաքանակով, հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի՝ 2022 թվականի մարտի 17-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 9): Այն նախատեսվում է հրատարակել հեղինակի միջոցներով:

Գիտական քարտուղար՝ **Ն.Հ.Դարբինյան**

2022 թ. մարտի 23
Երևան